

## Հիդրոտերկրաբանական և ինժինեռաերկրաբանական ուսումնասիրություն

Գեղի գետի ավազանը ամբողջությամբ գտնվում է ՀՀ Սյունիքի մարզում: Գեղի գետը պատկանում է այն լեռնային ջրահոսքերի տիպին, որոնք ունեն խառը սնուցում, սնուցման հիմնական աղբյուրը հանդիսանում է ձնհալի ջրերը: Սնուցման համար կարևոր դեր են խաղում գրունտային և անձրևային ջրերը: Գետի ջրային ռեժիմին առանձնահատուկ են հետևյալ փուլերը՝ գարնանային վարարումներ, որոնք գրավում են նաև ամառվա որոշ մասը, անձրևային վարարումներ, աշնանային ցածր մակարդակ, ամռան-աշնանային և ձմեռային ցածր մակարդակ:

Գետավարարումների բարձրագույն կետը, որը գրեթե միշտ համարվում է տարվա առավելագույնը, դիտարկվում է մայիս-հունիս ամիսներին:

Սովորաբար վարարման ընդհանուր ալիքի վրա գումարվում են անձրևային ջրերի հորդացումները սուր պիկերի տեսքով՝ տալով նրան բարձրակատար տեսք:

Ամեն տարի Գեղի գետը վերին հոսանքներում սառցապատվում է կայուն սառցաշերտով, որը միջինը տևում է 15-20 օր, ձմռանը սառցաշերտի հաստությունը հասնում է 2-4սմ:

Բազմատարյա ջրի առավելագույն մակարդակը կազմում է 240սմ:

Գեղի գետի ջրային ռեժիմը, ի տարբերություն շրջանի մյուս գետերի, բնութագրվում է սահուն, երկարատև վարարումներով (մարտ-հուլիս), որը պայմանավորված է ձյան և սառույցի հալոցքի սնմամբ: Վարարման և անկման սահուն ընթացքը պայմանավորված է անձրևներով: Հոսքի համար անձրևային ջրերը ունեն փոքր նշանակություն, հիմնականում հոսքը կազմավորվում է ձյան և սառույցի հալոցքների ջրերից: Առանձին տարիների սեպտեմբերին գետում հայտնվում են ափասառույցներ: Յուրտ ձմռանը գոյանում են սառցապատումներ: Սառցագոյացումը դիտվում է նոյեմբերի կեսերին և պահպանվում է մինչև մարտի կեսերը, որից հետո հալվում է տեղում: Վերին հոսանքներում, ինչպես նաև հովտի միջին հոսանքներում կուտակվում է ձյուն:

Ջրի որակը լավն է, մաքուր, թափանցիկ, պիտանի է տեխնիկական նպատակների համար: Այն կեղտոտվում է միայն գարնանային հորդացումների ժամանակ զգալի քանակությամբ ջրաբերվածքներով: Գետավարարման հոսքի ձևավորումը կախված է ոչ միայն ջրհավաքի բարձրությունից, այլև հզորությունից և ձյան ծածկույթի ժամկետներից: 5

Գեղի ջրամբարի հարակից տեղամասերում ստորերկրյա ջրերի հոսքերի ուսումնասիրության, ինչպես նաև ջրային բալանսի ճշգրտման նպատակով սույն աշխատանքային ծրագրով նախատեսվում է հայցվող տեղամասում իրականացնել երկրաբանահանույթային, երկրաֆիզիկական աշխատանքներ, հետախուզահորերի անցում, մեխանիկական սյունակային հորատում, ինժեներա-հիդրոտերկրաբանական ուսումնասիրություններ և նմուշարկում: